

ՀՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ Մ. ԶԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ

ԲԱՐՍԵԳՅԱՆ ՎԱՀԱԳՆ ՌԱՖԻԿԻ

**ԵՐԵՎԱՆԸ ԵՐԻ ՔՐՈՂՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՏԱԿԱՊՈՂ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ
ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՈՒՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ՝ ՀԵՄՈԴԻԱԼԻԶԱՅԻՆ
ԹԵՐԱՊԻԱՅԻ ԸՆԹԱՑՔԸ**

ԺԴ.00.03 – Ներքին հիվանդություններ մասնագիտությամբ
բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016



**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ МЕДИЦИНСКИЙ УНИВЕРСИТЕТ
им. М. ГЕРАЦИ**

БАРСЕГЯН ВААГН ՐԱՖԻԿՈՎԻЧ

**КАЧЕСТВО ЖИЗНИ И ФАКТОРЫ РИСКА ГЕМОДИАЛИЗНОЙ
ТЕРАПИИ БОЛЬНЫХ С ХРОНИЧЕСКОЙ БОЛЕЗНЬЮ ПОЧЕК**

ԱՎՏՈՐԵՓԵՐԱՏ

диссертации на соискание ученой степени
кандидата медицинских наук по специальности
14.00.03 – Внутренние болезни

ԵՐԵՎԱՆ – 2016

Աստենախոսության թեման հաստատվել է՝ Երևանի Ս. Յերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտակողորդինացիոն խորհրդի նիստում:

Գիտական դեկավար՝

բժշկական գիտությունների դրկուոր, պրոֆեսոր Է.Ս. Մելիքյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Սարգսյան
պ.գ.ք., դոցենտ Տ.Գ. Ալավերդյան

Առաջատար կազմակերպություն՝

Ո.Օ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոն

Աստենախոսության պաշտպանությունը կայանալու է՝ 2016թ. մարտի 10-ին, ժ. 14⁰⁰-ին, Երևանի Ս. Յերացու անվան պետական բժշկական համալսարանուն գործող ՀՀ ԲՈՀ-ի 028 «Թերապիայի» մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Կորյունի 2):

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի Ս. Յերացու անվան պետական բժշկական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. փետրվարի 8-ին:

028 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

բ.գ.թ. Լ.Գ. Թունյան

Тема диссертации утверждена на заседании научно-координационного совета Ереванского государственного медицинского университета им. М. Гераци.

Научный руководитель:

доктор медицинских наук,
профессор Э.С. Секоян

Официальные оппоненты:

д.м.н., профессор А.А. Саркисян
к.м.н., доцент Т. Г. Алавердян

Ведущая организация:

гематологический центр им.
Р.Օ. Еоляна

Защита диссертации состоится 10 марта 2016г., в 14⁰⁰, на заседании специализированного совета ВАК 028 “Терапии” при Ереванском государственном медицинском университете им. М.Гераци (0025, Ереван, ул. Корюна 2).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Ереванского государственного медицинского университета им. М.Гераци.
Автореферат разослан 8 февраля 2016 г.

Ученый секретарь
специализированного совета 028

к.м.н. Л.Г. Тунян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Կլինիկա-համաճարակաբանական տվյալների համաձայն Երիկամների օրոնիկ քիվանդության (ԵՔՀ, ըստ *ICD-10 Version 2010 N18.1-N18.5 Chronic kidney disease (CKD), stage 1-5*) տարածվածությունը բարձր է, և շարունակում է աճել ինչպես բնակչության ցածր և միջին, այնպես էլ առաջատար սոցիալ-տնտեսական նակարդակ ունեցող երկրներում, և ներկայումս իր համընդիմանուր առաջնակարգությամբ համեմատելի է սոցիալական նշանակություն ունեցող հիվանդությունների հետ [WHO global report. 2005]:

ԵՔՀ տառապող հիվանդների հետազոտման գերակա ուղղություններից է հեմոդիալիզային թերապիայի ընթացքի, հոսպիտալացումների, ապրելիության և մահացության կանխորչիչների և ռիսկի գործոնների բացահայտումը, ուսումնասիրությունը, ընդ որում այս լույսի ներքո մեծ նշանակություն է տրվում կյանքի որակի (ԿՌ) ցուցանիշներին [Pageels A.A. et al., 2012; Perales-Montilla C.M. et al., 2012]: Գրականության մեջ նկարագրվել են տվյալներ ԵՔՀ հեմոդիալիզային հիվանդների կող և ապրելիության ցուցանիշների միջև փոխկապակցությունների առկայության մասին [Bele S. et al. 2012; Osthus T.B. et al., 2012]: Հեմոդիալիզայի թերապիայի անբարենպաստ ելքի մոդիֆիկացվող ռիսկի գործոններից մեծ նշանակություն է տրվում անեմիային, մասնավորապես՝ արյան մեջ հեմոգլոբինի պարունակությանը [Kalantar-Zadeh K. et al., 2009; van Stralen K.J. et al., 2012], հիպոալբումինեմիային [de Mutsert R. et al., 2009; Malekmakan L. et al., 2010], հիվանդների արյան պլազմայում բարձր С-ռեակտիվ սպիտակուցի (CRP), հատկապես hs-CRP պարունակությանը [do Sameiro-Faria M. et al., 2013; Liu S.H. et al., 2014], պրոբրեռքային ցիտոկինների, մասնավորապես՝ IL-6-ի բարձր պարունակությանը [Costa E. et. al., 2008; Bowden R.G. et al., 2011], հիպերհոմոցիստենմիային [Gupta R.D. et al., 2010; Obeid R. et al., 2011]:

Բացի վերը նշված գործառնական և նյութափոխանակային ցուցանիշներից, հեմոդիալիզային թերապիայի ելքի վրա ազդող ռիսկի գործոններ են նաև սեռը [Vazquez F. et al., 2004; Carrero J.J. et al., 2011], տարիքը [Verdalles U. et al., 2010; van Walraven C. et al. 2014], հեմոդիալիզային թերապիայի տևողությունը [Seica A. et al., 2009; Bele S. et al., 2012], ռասայական և էթնիկ պատկանելիությունը [Nicholas S.B. et al., 2013], մշակույթային և աշխարհագրական առանձնահատկությունները [Zoccali C. et al., 2010; Yan G. et al., 2013], փսիխոսոցիալական, սոցիալ-դեմոգրաֆիկ և տնտեսական գործոնները [Perales-Montilla C.M. et al., 2012], կրթական ցենզը [Choi A.I. et al., 2011]:

ԵՔՀ 5-րդ փուլում (ԵՔՀ-5Փ) գտնվող և հեմոդիալիզային թերապիա ստացող հիվանդների մոտ բազմաթիվ ռիսկի գործոնների և դրանց համակցումների պայմաններում յուրահատուկ նշանակություն ունի դեպքեսիայի առկայությունը [Chen C.K. et al., 2010]: Այսպես, օրինակ, նկարագրվել են դեպքեսիայի և հիվանդների ապրելիության միջև [Kellerman Q.D. et al., 2010; Araujo S.M. et al., 2012], ինչպես նաև կող միջև փոխկապակցությունների առկայության մասին վկայող տվյալներ [Santos P.R., 2011]: Առկա են նաև հեմոդիալիզային հիվանդների մոտ դեպքեսիայի զարգացման ռասայական, կրոնական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների մասին վկայող հաղորդագրություններ [Weisbord S.D. et al., 2007; Lucchetti G. et al., 2012]: Հեմոդիալիզային թերապիայի ընթացքում զարգացող հոգեհուզական շեղումներից յուրահատուկ ուշադրության է արժանի տագնապի բարձր նակարդակի ծևավորումը, որը ոչ միայն կորելացվում է դեպքեսիայի ցուցանիշի հետ, այլև հաճախ նախորդում է դրա զարգացմանը [Hettema J.M. et al., 2010; Bayat A. et al., 2012]:

Վերոնշյալ տվյալները հանդիսացան ներկա հետազոտության իրականացման նախադրյալ:

Աշխատանքի նպատակն է. ուսումնասիրել երիկամների քրոնիկ հիվանդության 5-րդ փուլում գտնվող հիվանդների կյանքի որակի, ռիսկի գործոնների, ապրելիության և դրանց փոխկապակցությունների առանձնահատկությունները՝ երկարատև հեմոդիալիզային թերապիայի ընթացքում:

Հետազոտության խնդիրներն են.

1. Երիկամների քրոնիկ հիվանդությամբ տառապող հեմոդիալիզային հիվանդների մոտ քանակազես բնութագրել կյանքի որակը և դրա ենթակառուցվածքը:
2. Հեմոդիալիզային հիվանդների մոտ ուսումնասիրել կենսաքիմիական և հենատողիքական ցուցանիշները և դրանց փոխկապակցությունները՝ կյանքի որակի ցուցանիշների հետ:
3. Ուսումնասիրել հեմոդիալիզային հիվանդների ապրելիությունը՝ կախված կյանքի որակի մակարդակից և լաբորատոր ցուցանիշներից (հեմոգլոբին, ալբումին, CRP և այլն):
4. Բացահայտել դեպրեսիայի և տագնապի տարածվածությունը հեմոդիալիզային հիվանդների մոտ, ինչպես նաև, բնութագրել դրանց ազդեցությունը՝ կյանքի որակի և ապրելիության վրա:
5. Հետազոտել կյանքի որակի, ռիսկի գործոնների, փսիխոմետրիկ ցուցանիշների և դրանց միջև փոխկապակցությունների առանձնահատկությունները՝ կախված սերից, տարիքից, հեմոդիալիզային թերապիայի տևողությունից, հիմնական հիվանդության բնույթից:

Գիտական նորույթը.

- ✓ Առաջին անգամ ուսումնասիրվել և քանակազես բնութագրվել են հեմոդիալիզային հիվանդների կյանքի որակի ենթակառուցվածքը, ռիսկի գործոնները և դրանց փոխկապակցությունները՝ հայկական պոպուլյացիայում:
- ✓ Ապացուցվել է, որ հեմոդիալիզային թերապիայի մոդֆիկացվող ռիսկի գործոններից բացասական ազդեցություն հիվանդների ապրելիության վրա թողնում է արյան պլազմայում CRP-ի բարձրացած ցուցանիշը, ինչպես նաև դեպրեսիայի առկայությունը:
- ✓ Դայտնաբերվել է, որ արյան մեջ 101-110 գ/լ հեմոգլոբինի պարունակությունը ավելի վտանգավոր է հիվանդների ապրելիության առումով, քան այդ միջակայքից բարձր և նույնիսկ՝ ցածր պարունակությունը:
- ✓ Դարաբերական ռիսկի ցուցանիշների հաշվարկը ցոյց է տրվել, որ դեպրեսիայի զարգացման ռիսկը ավելի բարձր է տղամարդկանց մոտ, 50 տարեկանից բարձր հիվանդների մոտ, քրոնիկ գլոմերուլունեֆրիտով և պիելոնեֆրիտով տառապող հիվանդների խմբերում, և կախված չէ հեմոդիալիզային թերապիայի տևողությունից:
- ✓ Առաջին անգամ նկարագրվել են ապրերական հիվանդությամբ տառապող հեմոդիալիզային հիվանդների խմբում կյանքի որակը, փսիխոմետրիկ ցուցանիշները, ռիսկի գործոնները, և դրանց միջև փոխկապակցությունների առանձնահատկությունները:

Աշխատանքի ապրոբացիան.

Ստենախոսության հիմնական դրույթները զեկուցվել են. «Ռեարիլիտացիայի ժամանակակից տեսակետները թժկության մեջ» VI միջազգային գիտաժողովուն, Երևան-Դիլիջան 2013թ.; «Современные аспекты бальнеофизиотерапевтических технологий в медицинской реабилитации» միջազգային գիտա-գործնական

կոնֆերանսում, Մարիանսկիյե-Լազնե, Զեխիա, 2013թ.; Ոուսաստանի բժշկա-տեխնիկական գիտությունների Ակադեմիայի «Современные аспекты медико-технических наук» գիտական կոնֆերանսում, Սուսվա, 2014թ.; Դայաստանի 4-րդ միջազգային բժշկական համագումարում, Երևան, 2015թ.:

Աստենախոսության թեզի նախապաշտպանությունը տեղի է ունեցել 01.07.2015թ. Ս. Հերացու անվան ԵՊԲՀ գիտակողորդինացիոն խորհրդի նիստում:

Դրապարակումները.

Աստենախոսության թեմայով հրապարակվել են 7 գիտական հոդվածներ, որոնցից 5-ը առանց համակերնակների, և 3 թեզիսներ՝ համակերնակների հետ: Երկու թեզիս և մեկ հոդված տպագրվել են արտասահմանյան պարբերականներում, մեկական թեզիս և հոդված լույս են տեսել աստենախոսության նախապաշտպանությունից հետո:

Աստենախոսության կառուցվածքը և ծավալը.

Աստենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքի 155 էջում, բաղկացած է ներածությունից, գրականության վերլուծությունից, հետազոտության նյութի և մեթոդների նկարագրությունից, սեփական հետազոտության տվյալների 1 գլխից՝ 4 ենթագլխներով, անփոփունից, եզրակացություններից, գործնական առաջարկներից: Աստենախոսության մեջ ներառված են 57 նկար, 47 այլուսակ, և 203 սկզբնաղբյուր պարունակող գրականության ցանկ:

ՆԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ընտրանքի ծավալը և հիվանդների բնութագիրը.

Սույն հետազոտությունը մոնոկենտրոն, օբյերվացիոն, պրոսաեկստիվ է: Նետազոտության մեջ ընդգրկման չափանիշներն են եղել. հիվանդի չափահաս լիմելը, հիմնական հիվանդության համապատասխանելը ընտրված նողողոփական միավորներին, հիվանդի գրավոր տեղեկացված համաձայնությունը, հարցաշարերի հնքնուրույն լրացնելու ունակությունը, կայուն ստոմատիկ վիճակը՝ վերջին 1 ամսվա ընթացքում հոսպիտալացման բացակայությունը: Բացառման չափանիշներն են եղել. հետազոտության մեջ ընդգրկման չափանիշներին չբավարարելը, 2 և ավելի հիմնական հիվանդության արևայրությունը, քիչ հաճախականությանը հանդիպող հիվանդությունները, անհայտ էրիոլոգիայի նեֆրոպարհաները, հիվանդի ոչ ստարիլ վիճակը, խոսելու, գրելու և լեզվական դժվարությունները:

Նետազոտության մեջ ընդգրկվել են երիկամների քրոնիկ հիվանդության 5-րդ փուլում գտնվող 26-hg 70 տարեկան (միջին տարիքը՝ 52.42 ± 10.95 տարի; $M \pm SD$) 93 հիվանդ, որոնցից 59 տղամարդ (63.4%, միջին տարիքը՝ 53.6 ± 9.8) և 34 կին (36.6%, միջին տարիքը՝ 50.5 ± 12.4), ովքեր 2011-2014 թթ. ընթացքում ամբողւթառոր ծրագրային հենոդիալիզային բուժում են ստացել ք. Երևանի «Սատալի Ֆարմ» ՍՊԸ «Մալաթիա» ԲԿ հենոդիալիզի բաժանմունքում:

Ըստ ԵԲՀ առաջացման հիմնական հիվանդության հիվանդները բաշխվել են հետևյալ խմբերում.

1 խումբը. Քրոնիկ գլոմերուլունեֆրիտով (ՔԳ) տառապող 34 հիվանդ: Միջին տարիքը՝ 51.9 ± 11.6 տարի, հենոդիալիզային թերապիայի միջին տևողությունը՝ 44.9 ± 37.5 ամիս: Խսճում տղամարդիք կազմել են՝ 19 հիվանդ (միջին տարիքը՝ 55.2 ± 8.4 տարի), կանայք՝ 15 հիվանդ (միջին տարիքը՝ 49.3 ± 13.3 տարի): Ախտորոշումները հիմնավորված չեն նեֆրորինպահայի տվյալներով, այլ բխել են անամնեստիկ, կլինիկա-լաբորատոր և գործիքային մեթոդներից, քանի որ հիվանդության տվյալ փուլում նեֆրորինպահային ինֆորմատիվ չէ և հարաբերական հակացուցված է:

II խումբ. քրոնիկ պիելոնեֆրիտով (ՔՊ) տառապող 18 հիվանդ: Միջին տարիքը 54.8 ± 8.7 տարի, հեմոդիալիզային թերապիայի միջին տևողությունը՝ 49.2 ± 39.8 ամիս: Խսրում տղամարդիք կազմել են՝ 12 հիվանդ (միջին տարիքը՝ 54.6 ± 8.5 տարի), կանայք՝ 6 հիվանդ (միջին տարիքը՝ 55.4 ± 10.1 տարի):

III խումբ. պարբերական հիվանդությամբ (ՊԴ) տառապող 23 հիվանդ: Միջին տարիքը 47.6 ± 12.6 տարի, հեմոդիալիզային թերապիայի միջին տևողությունը՝ 41.2 ± 35.8 ամիս: ՊԴ գենետիկորեն հաստատված է 9 հիվանդի մոտ (39,1% դեպքերում): Խսրում տղամարդիք կազմել են՝ 16 հիվանդ (միջին տարիքը՝ 48.8 ± 13.8 տարի), կանայք՝ 7 հիվանդ (միջին տարիքը՝ 46.0 ± 11.8 տարի):

IV խումբ. Շաքարային դիաբետ-2 ով (ՇԴ) տառապող 18 հիվանդ: Միջին տարիքը 55.4 ± 9.3 տարի, հեմոդիալիզային թերապիայի միջին տևողությունը՝ 30.8 ± 27.1 ամիս: Խսրում տղամարդիք կազմել են՝ 12 հիվանդ (միջին տարիքը՝ 54.2 ± 9.5 տարի), կանայք՝ 6 հիվանդ (միջին տարիքը՝ 56.7 ± 8.9 տարի):

Ըստ հետազոտման պահին հեմոդիալիզային թերապիայի տևողության հիվանդները բաժանվել են մինչև 1 տարի (30 հիվանդ, 32.3%) և 1 տարուց ավել (63 հիվանդ, 67.7%) «դիալիզային ստաժ» ունեցողների խմբերի:

Ըստ տարիքի հիվանդները բաժանվել են մինչև 50 տարեկան (28 հիվանդ, 30.1%) և 50-անց (65 հիվանդ, 69.9%) տարիքային խմբերի:

Ըստ հեմոդիալիզային ստաժի և տարիքի խմբերի ձևավորումն իրականացվել է հաշվի առնելով ներկա ընտրանիք կազմը, հետազոտության խնդիրները և գրականության մեջ առկա խնբավորման նախատիպերը:

Հեմոդիալիզային թերապիան.

Հիվանդների հեմոդիալիզային թերապիան իրականացվել է 2006թ. վերանայված NKF-KDOQI (National Kidney Foundation – Kidney Disease Outcomes Quality Initiative) հանձնարարականներին համապատասխան, ապահովելով հեմոդիալիզի յուրաքանչյուր սեանսի դոզան՝ $\text{srKT/V} > 1.2$: Շաքարային դիաբետով տառապող հիվանդների համար կիրառվել են հնարավորինս ավելի մեծ հեմոդիալիզային դոզաներ (2006 Updates Clinical Practice Guidelines and Recommendations, Guideline 4. Minimally adequate hemodialysis): Հեմոդիալիզի սեանսները իրականացվել են BBraun ֆիրմայի DIALOG+ ապարատների միջոցով: Հեմոդիալիզային դոզան վերահսկվել է «Adimea» համակարգի միջոցով: Կալցիում-ֆոսֆորական փոխանակության կարգավորումը իրականացվել է «2003 K/DOQI Clinical Practice Guidelines for Bone Metabolism and Disease in Chronic Kidney Disease» ուղեցույցի հանձնարարականներին համապատասխան: Անեմիայի վերահսկումը իրականացվել է «2006 KDOQI Clinical Practice Guidelines and Clinical Practice Recommendations for Anemia in Chronic Kidney Disease» ուղեցույցի հանձնարարականներին համապատասխան: Զարկերակային հիպերտենզիայի վերահսկումը իրականացվել է «2004 K/DOQI Clinical Practice Guidelines on Hypertension and Antihypertensive Agents in Chronic Kidney Disease» ուղեցույցի հանձնարարականներին համապատասխան: Անդամագիստրուլինը կարգավորվել է 2000թ.-ի հանձնարարականներին համապատասխան, շաքարային դիաբետով տառապող հիվանդների մոտ լրացրույցի կիրառելով «2007 KDOQI Clinical Practice Guideline for Diabetes and CKD» հանձնարարականները:

Հետազոտման մեթոդները.

Կլինիկա-լաբորատոր հետազոտությունները. Արյան ընդհանուր հետազոտությունը իրականացվել է *SYSMEX KX-21N* անալիզատորի միջոցով, լեյկորանածկի մասին տվյալները լրացնելով օպտիկական մանրադիտակման եղանակով: Որոշվել են հետևյալ ցուցանիշները՝ հեմոգլոբին, երիթրոցիտներ, թրոմբոցիտներ, լեյկոցիտներ, հեմատոկրիտ, նեյտրոֆիլներ, սեզմնետակորիդ նեյտրոֆիլներ, էոզինոֆիլներ, բազոֆիլներ, լիմֆոցիտներ, մոնոցիտներ: Կիրառվել են նաև հեմոգրամայի լրացուցիչ ցուցանիշները՝ ESR – ԷՆՍ, MCV – երիթրոցիտների միջին ծավալ, MCH – Հեմոգլոբին (Hb) միջին պարունակությունը երիթրոցիտում, MCHC – Hb միջին կոնցենտրացիան երիթրոցիտում, RDW-SD – երիթրոցիտների բաշխման լայնության ստանդարտ շեղումը, RDW-CV – երիթրոցիտների բաշխման լայնությունը, PDW – թրոմբոցիտների ըստ ծավալի բաշխման լայնությունը, MPV – թրոմբոցիտների միջին ծավալը, PLCR – խոշոր թրոմբոցիտների գործակիցը: Արյան կենսաքիմիական հետազոտությունն իրականացվել է *Johnson & Johnson* ֆիրմայի *VITROS-250* համակարգի միջոցով, որոշելով հետևյալ ցուցանիշները՝ ընդհանուր սպիտակուց, ալբումին, C-ռեակտիվ սպիտակուց (*CRP*), միզանյութ, կրեատինին, միզաքրթը, ընդհանուր բիլիուրին, ուլոցակի բիլիուրին, գյուլկոզա, *ԱԼՏ*, *ԱՍՏ*, K^+ , Na^+ , Ca^{2+} , *Pi*, *Cl*: Բոլոր հիվանդների մոտ արյան նմուշառումները կատարվել են տվյալ շաբաթվա թվով երկրորդ հեմոդիալիզի սեանսից անմիջապես առաջ, զարկերակ-երակային ֆիստուլայից:

Կյանքի որակի (ԿՈ) գնահատումը. Հիվանդների ԿՈ գնահատելու համար աղապտացվել, վալիդացվել և կիրառվել է *KDQOL-SF v.1.3* հարցաշարը (Hays R.D. et al. 1994, 1997):

Ռեպրեսիայի և տագնապի հայտնաբերումը. Հիվանդների մոտ ռեպրեսիայի հայտնաբերման համար կիրառվել է Beck Depression Inventory (BDI) ստանդարտացված հարցաշարը, հաշվի առնելով հենողիալիզային հիվանդների շրջանում ռեպրեսիայի հայտնաբերման և կոռեկցիայի նպատակով դրա լայնորեն կիրառման հանգանամը [Roberts J. et al., 2006; Farrokhi F., 2013]: Տագնապի մակարդակը որոշելու նպատակով կիրառվել է ստանդարտացված և լայնորեն կիրառվող Spielberger State-Trait Anxiety Inventory (STAI) հարցաշարը, որը միաժամանակ հնարավորություն է տալիս գնահատել ռեակտիվ (STAI₁) և անձնային (STAI₂) տագնապները [Spielberger Ch.D., 1972]:

Եթիկական կողմը. Հիվանդների ընդգրկումը հետազոտության մեջ իրականացվել է նրանց տեղեկացված համաձայնությամբ: Մասնակիցների հարցման և տվյալների հավաքագրման, տեղեկատվության գաղտնագրման, տվյալների շտեմարանի ծևավորման, առաջնային նյութի պահպանման և մշակման ողջ գործառությունները իրականացվել են ապացուցողական թժկության պահանջների և եթիկական նորմերի [Bernard L.O., 1995] պահպանման՝ ըստ Համաշխարհային Բժշկական Ասոցիացիայի Հելսինկյան դեկադրացիայի վերանայված տարրերակի [World Medical Association Declaration in Helsinki: ethical principles for medical research involving human subjects, 2000]:

Հետազոտության եթիկական կողմը քննարկվել է Մ. Յերացու անվան ԵՊԲՀ-ի եթիկայի Կոմիտեի կողմից և տրվել է համապատասխան եզրակացություն անհրաժեշտ եթիկական նորմերին հետազոտության համապատասխանության մասին:

Կենսաբանական վիճակագրությունը. Տվյալների վերլուծությունը ներառել է հետևյալ մեթոդները և մոդելները:

Ներքին համաձայնեցվածությունը՝ վստահելիությունը որոշվել է α -Cronbach ցուցանիշի միջոցով [Cronbach L.J., 1951; 2004]:

Դաշվարկվել են հարաբերական ռիսկի այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են շանսերի հարաբերությունը՝ Odds ratio (*OR*) և հարաբերական ռիսկը՝ Relative risk (*RR*):

Ապրելիության ցուցանիշը ուսումնասիրվել է Կոքսի համամասնական ռիսկի ռեզրեսիոն մոդելի միջոցով, կառուցելով Կապան-Մեյերի գրաֆիկները [Cox D.R. , 1972; Jager K.J. et al., 2008]: KDQOL-SF™ հայերեն հարցաշարի համարժեքությունը բնօրինակի հետ ուսումնասիրվել է 2 way ANOVA մեթոդով, հաշվարկելով F ցուցանիշը և դրա վիճակագրական նշանակալիությունը: Վիճակագրական վերլուծության հիմնական մեթոդներն են եղել նաև նկարագրական վիճակագրությունը, հաճախականությունների բաշխումը (ըստ Կոլմո-Որով-Միխոնվի), կոռելյացիոն վերլուծությունը (*Spearman-ի* և *Pearson-ի* մոդելներ), գծային ռեզրեսիան, բազմակի ռեզրեսիան, ֆակտորային անալիզը: Եթևազոտվող ցուցանիշների միջև տարրերությունների վիճակագրական նշանակալիության գնահատումը իրականացվել է Ստյուդենտի t-չափանիշի միջոցով: Վիճակագրական վերլուծություն իրականացնելիս պահպանվել են Rosner B. [2006] և De Muth J.E. [2009] հանձնարարականները: Վիճակագրական վերլուծությունն իրականացվել է STATISTICA 10, GraphPad Prism 5 համակարգչային ծրագրերով:

ԵԶՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՆԱՐԿՈՒՄԸ

ԵԶՏ ՏՊՈՎԱՊՈՂ ԻՒՎԱՆԴՆԵՐԻ Կյանքի որակը, ռիսկի գործոնները և ապրելիությունը՝ հեմոդիալիգային թերապիային ընթացքում:

Ստուգված տվյալները վկայում են, որ իւվանդների Կո ընդիանուլ ցուցանիշը զգալի ցածր է ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ հոգեկան բաղադրիչների հաշվին: Աղապտացված հարցաշարի ներքին համաձայնության վերլուծությունը ցույց տվեց, դրա առանձին տարրերի միջև առկա է ներքին համաձայնեցվածություն՝ α -Cronbach ցուցանիշները գտնվում են 0.59-0.87 միջակայքում:

Ցուցանիշների փոխադարձ համաձայնեցվածության և վալիդության ուսումնասիրությունը Spearman-ի ոչպարամետրիկ կոռելյացիոն վերլուծության եղանակով ցույց տվեց, որ Կո HRQOL սանդղակների միջև 90.9% դեպքերում առկա են վիճակագրական նշանակալիք որական կոռելյացիոն կապեր, KDQOL սանդղակների միջև նաև առանձին կապերը գրանցվել են 59.6% դեպքերում, իսկ HRQOL և KDQOL սանդղակների միջև կոռելյացիաներ առկա են 63.4% դեպքերում:


KDQOL-SF™ պաշտոնական տարրերակի տվյալների հետ համեմատություն իրականացնելիս (2-way ANOVA) ապացուցվել է, որ ներկա հետազոտությունը խիստ բարձր հավաստիությամբ համընկնում է պաշտոնական տարրերակի տվյալների հետ (Նկար 1):

Այսիսով ապացուցվում է աղապտացված հարցաշարի վալիդությունը և ստացված տվյալների օրյեկտիվությունը:

Պետք է նշել, որ չնայած ԵԶՏ իւվանդների Կո և ապրելիության միջև առկա գրականության տվյալներին [Beale S. et al. 2012; Lacson E.Jr. et al., 2012], տվյալ հետազոտության մեջ Կո տարրեր մակարդակներ ունեցող իւվանդների խմբերի միջև ապրելիության վիճակագրորեն հավաստի տարրերություններ չեն արձանագրվել ($P>0.05$):

Կոռելյացիոն անալիզի տվյալները վկայում են, որ Կո ցուցանիշների (HRQOL և KDQOL) հետ դրական փոխապակցված են արյան պլազմայում ալբումինի (համապատասխանաբար $r=0.225$; $P<0.01$ և $r=0.278$; $P<0.01$), կրեատինինի (համապատասխանաբար $r=0.253$; $P<0.01$ և $r=0.223$; $P<0.01$) կոնցենտրացիաները:

ԿՈ ՍԱՆԴՀԱԿԱՆԵՐԻ ՀԱՄԵՆՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ



Նկար 1. RAND պաշտոնական տարբերակի և ներկա հետազոտությամբ ստացված

ԿՈ սանդհակաների համենմատական տվյալները: 1. ախտանիշներ/իհմնախնդիրներ 2. երիկանմերի հիվանդության ազդեցությունը առօրյա գրքունետությանը 3. երիկանմերի հիվանդության բեռը 4. աշխատանքային կարգավիճակը 5. կողմին փունկցիան 6.

սոցիալական փոխազդեցության որակը 7. սեքսուալ ֆունկցիան 8. քունը 9. սոցիալական աջակցությունը 10. դիալիզային աշխատակազմի աջակցությունը 11. բժշկական օգնությամբ բավարպածությունը ; 1. PF-Փիզիկական վիճակը 2. RP-Փիզիկական ակտիվությունը 3. BP-Փիզիկական ցավը 4. GH-ընդհանուր առողջությունը 5. MH-հոգեէկան առողջությունը 6. RE-հուզական գործոնը 7. SF-սոցիալական ակտիվությունը 8. VT-կենսունակությունը


C-ռեակտիվ սպիտակուցի կոնցենտրացիան բացասական է կոռեյացվում KDQOL ցուցանիշի հետ ($r=-0.243; P<0.01$):

Մեր կողմից կատարված հետազոտության ընթացքում արյան ալվազմայում ալբումինի և ընդհանուր սպիտակուցի պարունակությունից ապրելիության կախվածություն չի հայտնաբերվել, սակայն գրանցվել է ալբումինի քանակության ընտրողական կոռեյացիա ԿՈ KDQOL սանդղակի որոշ ցուցանիշների, մասնավորապես՝ «Երիկանմերի հիվանդության բեռը» սանդղակի հետ ($r=0.413; P<0.001$):

Հայտնաբերվել է, որ HRQOL և KDQOL ցուցանիշների հետ բացասաբար է կոռեյացվում արյան մեջ լեյկոցիտների ընդհանուր քանակը ($r=-0.235; P<0.01$ և $r=-0.219; P<0.01$) և հատկապես՝ սեգմենտալ կորիզի նեյտրոֆիլների քանակը ($r=-0.348; P<0.01$ և $r=-0.238; P<0.01$), իսկ դրական՝ լիմֆոցիտների քանակը ($r=0.263; P<0.01$ և $r=0.321; P<0.01$): Առկա է նաև բացասական կոռեյացիա KQDOL ցուցանիշի և ԷՍԱ միջև ($r=-0.277; P<0.01$):

Բացահայտվել է, որ հեմոռիհալիզային թերապիայի ընթացքում ամենացածր ապրելիությունը նկատվում է արյան մեջ 101-110գ/լ հեմոգլոբինի պարունակությամբ հիվանդների խմբում, ինչը անհրաժեշտ է հաշվի առնել անեմիայի կոռեկցիայի ընթացքում (Նկար 2):

Հայտնաբերվել է հիվանդների ապրելիության ցուցանիշի էական կախվածություն՝ արյան պլազմայում C-ռեակտիվ սպիտակուցի (CRP) պարունակությունից վերոնշյալ ցուցանիշի բարձր մակարդակի դեպքում ապրելիությունը զգալի նվազում է (Նկար 3):




Նկար 2. Երկարատև հեմոդիալիզային թերապիա ստացող հիվանդների ապրելիությունը՝ կախված արյան մեջ հեմոգլոբինի պարունակությունից (Կապվան-Մյերի □րաֆիկ):


Հեմոդիալիզային հիվանդների շրջանում Beck Depression Inventory (BDI) հարցաշարի միջոցով կատարված թեստավորման արդյունքում դեպրեսիա հայտնաբերվել է 42.3% դեպքերում, ընդ որում դեպրեսիայի ցուցանիշը բացասական կոռելյացիայի մեջ է գտնվում Կո HRQOL հարցաշարի բոլոր սանդղակների հետ: Դեպրեսիան ամենաարտահայտված բացասական կախվածություն է դրսևորում Կո ընդհանուր ցուցանիշի (TH) ($r = -0.629; P < 0.001$) և Կո հոգեկան բաղադրիչի (MC) հետ ($r = -0.623; P < 0.001$): KDQOL սանդղակի 13 ցուցանիշներից 9-ի հետ դեպրեսիայի բացասական փոխկապակցությունները եղել են վիճակագրորեն նշանակալից: Առավելագույն արտահայտված կոռելյացիաները դրսևորվել են դեպրեսիայի և վերոհիշյալ հարցաշարի «միջն ցուցանիշը» ($r = -0.640; P < 0.001$), «ախտանիշներ/հիմնախանդիրներ» ($r = -0.514; P < 0.001$), «երիկամների հիվանդության բեռը» ($r = -0.504; P < 0.001$) և «երիկամների հիվանդության ազդեցությունը առօրյա գործունեությանը» ($r = -0.498; P < 0.001$) սանդղակները:

Դեպրեսիան բացասական կոռելյացիա է դրսևորում նաև կոզմիտիվ ֆունկցիան բնութագրող սանդղակի հետ ($r = -0.470; P < 0.001$), ընդ որում առաջին անգամ համանման տվյալներ ստացվել են Bossola M. et al. [2012] կողմից:

Ուսումնասիրվել է հեմոդիալիզային հիվանդների ապրելիությունը՝ կախված դեպրեսիայի առկայությունից: Պարզվել է, որ դեպրեսիայի առկայությունը էականորեն բացասարար է ազդում վերոնշյալ ցուցանիշի վրա (Նկար 4):




Նկար 3. Երկարատև հեմոդիալիզային թերապիա ստացող հիվանդների ապրելիությունը՝ կախված արյան պլազմայում CRP-ի մակարդակից (Կապը ան-Մեջերի քաֆիկ):




Նկար 4. ԵԶՀ-5Փ հեմոդիալիզային հիվանդների ապրելիությունը՝ կախված դեպրեսիայի առկայությունից և բացակայությունից (Կապը ան-Մեջերի քաֆիկ):

Հեմոդիալիզային հիվանդների մոտ ռեակտիվ տագնապի բարձր մակարդակ հայտնաբերվել է 66.7% դեպքերում: Բացահայտվել է, որ ռեակտիվ տագնապը բացասաբր է փոխկապակցված ԿՌ սանդղակների մեծանմանության հետ: HRQOL ցուցանիշներից առավելագույն ուժգնության փոխկապակցություններ դրսնորել են

«ԿՈ հոգեկան բաղադրիչը (MC)» ($r=-0.646$; $P<0.0001$; Նկար 5, Ա), «հոգեկան առողջությունը (MH)» ($r=-0.604$; $P<0.0001$), «ԿՈ ընդհանուր ցուցանիշը (TH)» ($r=-0.587$; $P<0.0001$) և «ընդհանուր առողջությունը (GH)» ($r=-0.576$; $P<0.001$) սանդղակները:



Նկար 5. Ա) Ուսակտիվ տագնապակի և HRQOL (SF-36) «ԿՈ հոգեկան բաղադրիչը (MC)» ցուցանիշների միջև բացասական կոռելյացիան **Բ)** Ուսակտիվ տագնապակի և դեպրեսիայի ցուցանիշների միջև դրական կոռելյացիան



Նկար 6. Ա) Անձնային տագնապակի և HRQOL (SF-36) «ԿՈ հոգեկան բաղադրիչը (MC)» ցուցանիշների միջև բացասական կոռելյացիան **Բ)** Անձնային տագնապակի և դեպրեսիայի ցուցանիշների միջև դրական կոռելյացիան

KDQOL հարցաշարից առավելագույն բացասական կոռելյացիաները դրսւորել են ԿՈ «միջին ցուցանիշը» ($r=-0.676$; $P<0.0001$), «երիկամների հիվանդության բեռը» ($r=-0.649$; $P<0.0001$), «կողմիտիկ ֆունկցիան» ($r=-0.551$; $P<0.001$), «երիկամների հիվանդության ազդեցությունը առօրյա գործունեությանը» ($r=-0.527$; $P<0.001$) և «սոցիալական փոխազդեցության դրակը» ($r=-0.509$; $P<0.01$) սանդղակները: Դեպրեսիան դրական է կոռելյացվում ռեակտիվ տագնապակի ցուցանիշի հետ (Նկար 5, Բ):

Հետազոտմանը մասնակցած հիվանդների 74.7%-ի մոտ հայտնաբերվել է անձնային տագնապի բարձր մակարդակ, ընդ որում, այն բացասական է կոռելյացվում ԿՈ ցուցանիշներից մեծամասնության հետ:

HRQOL սանդղակներից ամենաարտահայտված բացասական կոռելյացիաները անձնային տագնապի հետ դրսվում են «ԿՈ հոգեկան բաղադրիչը (MC)» ($r=-0.626$; $P<0.0001$; Ակար 6, Ա), «հոգեկան առողջությունը (MH)» ($r=-0.595$; $P<0.0001$) և «ԿՈ ընդհանուր ցուցանիշը (TH)» ($r=-0.561$; $P<0.0001$):

KDQOL սանդղակներից առավելագույն բացասական կոռելյացիաները դրսվում են ԿՈ «միջին ցուցանիշը» ($r=-0.546$; $P<0.0001$) և «Երիկամների հիվանդության բեռը» ($r=-0.630$; $P<0.0001$) սանդղակները: Անձնային տագնապի ցուցանիշը դրական կոռելյացիայի մեջ է դեպքեսիայի ցուցանիշի հետ (Ակար 6, Բ):

Հեմոդիալիզային թերապիայի ռիսկի գործոնների գեներային առանձնահատկությունները ԵԶ հիվանդների մոտ

Հիվանդների մոտ արյան ցուցանիշների հավաստի գեներային առանձնահատկություններ, բացի կրեատինինի պարունակությունից, չեն հայտնաբերվել: Դեպքեսիան տղամարդկանց մոտ հայտնաբերվել է ավելի հաճախ (45.5%), քան կանանց մոտ (37%): Տղամարդկանց մոտ ռեակտիվ տագնապ գրանցվել է ավելի հաճախ (70.2%), քան կանանց մոտ (60.7%): Անձնային տագնապի տարածվածությամբ տղամարդկանց և կանանց խմբերը գործեն չեն տարրերվում (74.5% և 75%):

Հայտնաբերվել են դեպքեսիայի և տագնապի կոռելյացիաների գեներային առանձնահատկություններ՝ ԿՈ ցուցանիշների հետ: Օրինակ՝ տղամարդկանց մոտ «ֆիզիկական ակտիվության» ցուցանիշը բացասական է փոխկապակցված դեպքեսիայի ցուցանիշի հետ ($r=-0.417$; $P<0.01$), իսկ կանանց մոտ այդպիսի փոխկապակցություն չի գրանցվել: Դեպքեսիայի և «կենսունակության» ցուցանիշի միջև կոռելյացիան կանանց մոտ կրկնակի ուժեղ է ($r=-0.709$; $P<0.001$) տղամարդկանց համեմատ ($r=-0.351$; $P<0.05$): ԿՈ «սոցիալական ակտիվությունը» սանդղակի ցուցանիշները դեպքեսիայի, ռեակտիվ և անձնային տագնապների հետ ավելի արտահայտված են փոխկապակցված կանանց մոտ, քան տղամարդկանց:

Դեպքեսիայի զարգացման հարաբերական ռիսկը ավելի բարձր է եղել տղամարդկանց մոտ ($OR=1.478$; $RR=1.245$), քան կանանց ($OR=0.911$; $RR=0.943$): Ռեակտիվ տագնապի հարաբերական ռիսկը նույնապես բարձր է եղել տղամարդկանց մոտ ($OR=1.269$; $RR=1.176$, ընդդեմ $OR=0.772$; $RR=0.916$): Անձնային տագնապի հարաբերական ռիսկը ավելի բարձր էր կանանց մոտ ($OR=1.425$; $RR=1.282$ ընդդեմ $OR=0.961$; $RR=0.989$):

Տարբեր պարունակիաների դեպքում հեմոդիալիզային թերապիայի ռիսկի գործոնների առանձնահատկությունները

